Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 25 - Ա
որոշման

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում բնակվող մինչև 14 տարեկան երեխաների համար անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ Ավենյու Սաութ)
4.	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն (քաղաք Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ՝ 01533153)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Քաղաք Երևանում և Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզերում գտնվող բժշկական հաստատությունների տարածքում, բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	517,147,877 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետությունում բնակվող մինչև 14 տարեկան երեխաները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) բժշկական սարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների, ծախսվող ատամնաբուժական պարագաների, բժշկական քարտերի, վառելիքի, պահեստամասերի, համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում ու ատամնաբուժական (ատամի խոզանակ, մածուկ և այլն) բեռի ներմուծում - 63,200,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) ատամնաբուժական կանխարգելիչ միջոցառումների իրականացում, բուժանձնակազմի, օժանդակ մասնագետների ու վարչական աշխատակիցների վարձատրություն և վերապատրաստման, փորձի փոխանակման գործընթացների կազմակերպում, ապահովագրական, աուդիտորական ու խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում – 418,044,600 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 3) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության աշխատանքների (բժշկական սարքավորումների չափումներ, բժշկական թափոնների դուրսբերում և ոչնչացում, ռենտգեն ապարատների և կաբինետների դոզաչափում, բուժանձնակազմի պրոֆիլակտիկ զննում և այլն) իրականացում - 4,500,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 4) ակնաբուժական և ատամնաբուժական կլինիկաների պահպանության, վերանորոգման, վերակառուցման և կահավորման աշխատանքների իրականացում ու տնտեսական ապրանքների, գրենական պիտույքների և պարագաների, գրասենյակային համակարգչային ծրագրերի ձեռքբերում – 31,403,277 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) բժշկական սարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների, ծախսվող ատամնաբուժական պարագաների, հաճախորդների գրանցման համար նախատեսված համակարգչային ծրագրի,

		համակարգչային տեխնիկայի, բժշկական քարտերի ձեռքբերում և ատամնաբուժական (ատամի խոզանակ, մածուկ և այլն) բեռի ներմուծում - 60,000,000 դրամ. 2) ատամնաբուժական կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար նախատեսված ապրանքների (մանկական գրքեր, խաղալիքներ, անձնական հիգիենայի պարագաներ և այլն) ձեռքբերում - 15,000,000 դրամ. 3) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների, վառելիքի, պահեստամասերի ձեռքբերում - 3,200,000 դրամ. 4) էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում - 4,063,000 դրամ. 5) գազամատակարարման ծառայությունների ձեռքբերում - 5,700,000 դրամ. 6) գազասպառման համակարգի, գազատարի տեխնիկական սպասարկման և կարգաբերման ծառայությունների ձեռքբերում - 392,277 դրամ. 7) կլինիկաների շենքերի հակահրդեհային անվտանգության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում - 360,000 դրամ. 8) հեռախոսակապի և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում - 2,637,000 դրամ. 9) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում - 1,251,000 դրամ. 10) ճառագայթային անվտանգության և սանիտարական վերահսկողության հետ կապված ծառայությունների (բժշկական սարքավորումների չափումներ, ռենտգեն ապարատների և կաբինետների դոզաչափում, բուժանձնակազմի պրոֆիլակտիկ զննում, բժշկական թափոնների դուրսբերում և ոչնչացում) ձեռքբերում - 4,500,000 դրամ.

		11) գրենական պիտույքների, գրասենյակային պարագաների ձեռքբերում, գրասենյակային համակարգչային ծրագրերի ձեռքբերում և տեխնիկական սպասարկում - 5,500,000 դրամ. 12) հաշվապահական ծրագրի սպասարկման ծառայությունների ձեռքբերում - 1,554,600 դրամ. 13) հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների ձեռքբերում - 5,940,000 դրամ. 14) իրավաբանական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում - 12,000,000 դրամ. 15) կադրերի վարման ծառայությունների ձեռքբերում - 3,600,000 դրամ. 16) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում - 3,750,000 դրամ. 17) բուժանձնակազմի, օժանդակ մասնագետների և վարչական աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության ծառայությունների ձեռքբերում - 15,000,000 դրամ. 18) ակնաբուժական և ատամնաբուժական կլինիկաների շենքերի պահպանության, վերանորոգման ծառայությունների, կահույքի ու տնտեսական ապրանքների ձեռքբերում - 5,500,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) վարչական աշխատակիցների աշխատավարձ - 32,000,000 դրամ. 2) հաշվապահական, իրավաբանական խորհրդատվական, կադրերի վարման, աուդիտորական ծառայությունների ձեռքբերում – 26,844,600 դրամ. 3) էլեկտրաէներգիայի մատակարարման, ջրամատակարարման, գազա-մատակարարման, գազի և գազատարի տեխնիկական սպասարկման, հակահրդեհային սպասարկման, հեռախոսակապի ու էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում - 14,403,277 դրամ. 4) տրանսպորտային ծախսեր (վառելիքի, ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում, տեխնիկական սպասարկում) - 3,200,000 դրամ.

		5) գրասենյակային ծախսեր (գրենական պիտույքների և պարագաների ձեռքբերում, գրասենյակային համակարգչային ծրագրերի ձեռքբերում և տեխնիկական սպասարկում) - 5,500,000 դրամ. 6) բուժանձնակազմի, օժանդակ մասնագետների և վարչական աշխատակիցների բժշկական ապահովագրություն, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրություն - 15,000,000 դրամ. 7) հարկեր, տուրքեր (անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ) - 6,000,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետների աշխատակազմերի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություններ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմին տեղեկությունների ներկայացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ